

Առևտրի բան է, իսկ առևտրական շահն է Ջոն-Բուլլի բոլոր գործողութիւնների շարժառիթը: Մենք տեսանք անցեալ անգամ թէ ինչպէս այդ շահին զոհ են բերուել և թիւրքիայի քրիստոնեաները...

ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ

«Արիւնիք», մատնացոյց է անում «Տարօրինակ մրցում մը, զոր յայն և երբեմն ալ հրեայ աղջիկներ կը մղեն հայ աղջիկներու դէմ՝ անոնց ձեռքէն խլելու համար հայ փեսացուներ»: Եթէ այս տեսակ սիրային ողբասկանների մէջ ստէյլ օտարուհիներն են որ յաջողութեան մրցանակը խլում են, թերթի կարծիքով պատճառն այն է, որ հայ աղջիկները նուազ ճարտար են ամուսին ձգելու մէջ, քան յայն և հրեայ աղջիկները, որոնց բովանդակ շնորհը կայանում է միայն հրապոյր աղբիւսն մէջ և որոնց ճարտարութիւնը ռակայն շատ անգամ զղջումի և յուսախաբութեան տեղիք է տալիս և աղիտարեք հանեալքներ ունենում հայ երիտասարդների համար:

Նոյն թերթը՝ ումանց կողմից արտայայտուած փափաքի հակառակ՝ աւելորդ է համարում Մայրա-վանքի յաւելումը Սիսի մէջ, երբ արդէն իսկ բաւականինից աւելի թիւ են կազմում երուսաղէմի և Արմաշի վանքերի արտադրած երիտասարդ կուսակիւցները: Լուսադոյն է դառնում որ Յիլիկեան Ժառանգաւորացը վերածուի մի օգտակար հաստատութեան, օրինակի համար՝ նրկրադրծական վարժարանի կամ Արհեստանոցի, որոնց այնքան պէտք ունին Սսիցիք:

«Բիւզանդիոն»-ը նոյնպէս համակիր է երեւում նոյն մտքին և բացէ ի բաց հակառակում է Սիսի մէջ Ար-

մաշի նման Դպրեվանդ կամ Ժառանգաւորաց վարժարան բանալու զազափառին:

«Դեղունի», 1904 թ. թիւ 1—10: Վենետիկի Միսիթարեանների այդ պատկերազարդ «հայաթիւրթը» իր աչքի ընկնող շրեղութեամբ կտրող է մրցել նոյնանման եւրոպական ամենաընտիր հրատարակութիւնների հետ. թուրթը, տպագրութիւնը, պատկերների ներութիւնը գերազանց են: Դժբախտարար նոյնը չենք կարող ասել բովանդակութեան մասին, որ չափազանց աղքատ է և միակողմանի: Ինչպէս երևում է, որոշ սխառեմ, ծրագիր, նիւթերի ընտրութիւն չունի խմբագրութիւնը, որի զբաղեան-զեղատուութեան ճաշակն էլ հեռու չէ զնացել կեղծ-կլասիկական և վկայարանական ազդեցութիւններից... Խիստ ընտրութիւն և սխառեմ չի երևում և պատկերների մէջ: Եթէ «Գեղունին» լինէր լոկ շրեղ պատկերների մի «ալբոմ» — հասկանալի կը լինէին հանդիս բովանդակութեան հետ չկապուած պատահական պատկերները. այդ դէպքում ինչո՞ւ չտալ հանդէսի փոխարէն միայն ալբոմ... Դափնիներն էլ բաւական էժանացել են Վենետիկում. «բանաստեղծներ», որոնք արտադրել են մի երկու կտակածելի յաջողութիւն ունեցող ոտանաւորներ՝ արժանացել են «Գեղունիի» անմահների ցանկին և բազմիկ են նրա էջերում... Ինչո՞ւ չտալ նաև «Գեղունի»-ի

գործակալները ու բաժանորդները լուսանկարները. չէ՞ որ աւելի ևս շատ կը տարածուէր «հայաթիւրթը» և նրա համակրելի նպատակը—«Ուրբախնամ գործ մը կատարել»—աւելի մեծ աջողութեամբ կ'իրագործուէր... Լըջուիւն, խիստ ընտրութիւն և որոշ սխառտեմ ու ծրագիր կը մաղթէինք «Գիղունի» խմբագրութեան, որպէսզի դրանց պակասութիւնը չշնասէր հանգիսի արտաքին արժանիքներին:

«Անտիսի», թիւ 9—10., սեպտեմբեր-հոկտեմբեր.—Ազօֆ Թալասո հրատարակած է «Revue Théâtrale» ամսագրի մէջ մի ընդարձակ ուսումնասիրութիւն թիւրք թատրոնի մասին: Այդ գրութիւնը առիթով «Անահիտը» առում է հետեւեալը:

Թալասո Պոլիս ծնած յոյն մըն է, որ հայերը բաւական մօտէն կը ճանշնայ և կը սիրէ իւր քոյրը հայու մը հետ ամուսնացած է. այս ուսումնասիրութեան մէջ մեծ համակրանքով կը լսուի հայ ցեղի մասին, ի վեր կը հանէ ռահվիրայի դերը. զոր հայերը կատարած են թուրք թատերական զբաղանդութեան և երաժշտութեան բողբոջումին մէջ. բայց իւր հայասիրութիւնը արգելք չէ եղած իրեն տեսնելու՝ ինչ որ թուրքերն ունին լաւ, շահական, ինչ որ անոնք արտագրած են մատուր ոլորտին մէջ: Իր ուսումնասիրութիւնը կը յայտնէ զայութիւնը թուրք զբաղանդութեան մը, բաւական ընդարձակ, բազմաձև, ուր կան աղնիւ ձգտումներ, և որ անվիճելի կերպով համակրելի արտագրութիւններ ունի՝ մասնաւորապէս թատերական ձևին մէջ: Գ. Թալասոի ուսումնասիրութիւնը հեռու է ամբողջական և իր ամեն կէտերուն մէջ ճիշտ ըլլալէ. թուրք թատրոնի ստեղծման մէջ՝ հայոց դերը լիակատար կերպով չէ ցոյց տրուած հոն. ու կան խել մը սխալ ծանօթութիւններ (ինչպէս Աղամեանի մասին իւր յիշած մանրամասնութիւններէն մէկըստին). իր անխառն հիացումն ալ՝ թուրք զբաղանք գործերուն համար

զոր կը յիշէ, կընայ վիճելի ըլլալ. այդ գործերը ձևի մէջ թերութիւններ կըրնան ունենալ, կընան զուրկ ըլլալ կենդանութենէ, արուեստի կատարելութենէ. ոչ մէկ որոշ կարծիք յայտնել առ այժմ անհնար է, առանց գործերը ուսումնասիրելու Բայց ինչ որ հիմակուց իսկ անվիճելի է, այն է, որ թուրքերը ունին քնարերգական, վիպական, իմաստասիրական, թատերական զբաղանդութիւն մը, և թատերական զբաղանդութեան մէջ՝ գէթ ձեռքառններով՝ լաւագոյն ուղղութեան մը հետեւած են քան տաճկահայ թատերագիրները. մինչ մերինները—բացի նար-Պէյնէն, որ զբաժ է Այափառնիսն և Պարոնեանէն որ զբաժ է Արեւելեան ազամեարոյժը և Պաղատար աղբարը,—զրեթէ միայն աղգային հին պատմութենէն քաղուած ողբերգութիւններով (որոնք ամենամեծ մասամբ ինքնաապուրեմ են ու իրական կենդանութենէ բոլորովին զուրկ են) լեցուցած են մեր բեմը, թուրք թատերագիրները անմիջապէս կեանքն առած են իրենց ներշնչաբան, ժամանակակից գէպերը, բարքերը, ընկերական, բարոյական հարցերը նիւթընտրած են իրենց թատերագրութեանց համար, և իրենց մեծ մասին—մանաւանդ Ամէտ Միտահիթի—ձեռքառնները եղած են յանդուգն, նորասէր, աղատասէր, օսմանեան հոգին ու բարբերը վերանորոգելու, «եւրոպացնելու» ձգտող, այսինքն թէ ըրած են ինքնարեւարդ, հետեւելով ոչ թէ պոլսական հայ թատերագիրներուն, այլ եւրոպական վարպետներուն, ինչ որ Սունդուկեանց՝ յետոյ Գովկասի հայ բեմին վրայ հայակապօքէն կատարուեց:

Գ. Թալասոի ուսումնասիրութեան առաջին մասը նուիրուած է թրքական «Քարակէօզ»-ի և «Օրթա օյսունու»-ի ժողովրդական ներկայացմանց. այդ ներկայացմանց համար ալ մինք մեր սովորական արհամարհանքով վերաբերուած ենք միշտ, զանոնք նկատելով իբրեւ «միմիայն» անբարոյական պատկերացումներ զուհիկ կըրբերու:

Պ. Թալասոի ուսումնասիրութիւնը ցոյց կուտայ, որ այդ դատաստանը ճիշտ չէ. «Քարակէօզ»-ի ներկայացումները ժողովրդին կրքերը փայփայելու չէ միայն որ ծառայած են, այլ «ժիմաղի շը-նորհիւ ժողովրդին թեւութիւնները սրբազգեցնելու» պաշտօնը (Թատրոնին հինաւորը, հիմնական պաշտօնը) կատարած են ու Պ. Թալասո կը յայտնէ թէ «Քարակէօզ»-ի ներկայացմանց մէջ նայնիսկ Մոլիէրի ամբողջ տեսարաններ կան՝ այդ տարբերակն բնմին պատշաճեցուցուած: Կարելի չէ նաև շնկատել որ այդ «Քարակէօզ»-ի ու «Օրթա-օյունու»-ի ներկայացումները, որքան ալ պարզ ու ռամիկ ըլլային, Թատրոնի հիմունք մըն էին, ժողովրդական հիմունք մը, զոր թուրքը շատոնց ի վեր ունէր իր մէջ, իր ծոցէն ելած, մինչ մինը հայերս մեր բարբերուն մէջ՝ դէթ քրիստոնէութեան մուտքէն ի վեր երբէք ոչինչ ունեցած ենք, որ Թատրոնի սաղմն իսկ ներկայացնէ. Թատրոնը, ԺԹ. դարուն երկրորդ կէտին մէջ, ամբողջապէս նւթալայնէ փոխ աւած ենք, և ատոր համար է, որ ան մեր մէջ արուեստական կեանք մը ունեցած է, մինչև Սուլդուկեանցի դաւանութ. Թուրքերը, ունենալով արդէն ժողովրդական Թատրոն մը, որ թէպէտ ռամիկ՝ կեանքի գիտողութեան, բարբերու քննադատութեան վրայ հիմնուած էր, իրենց այդ հին ուղղութիւնը շարունակած են՝ երբ Թատրոնի երոպական ու կատարելագործուած ձևն ընդգրկած են:

Մանգումէ. Հայ գրականութեան և մատարականութեան նշանաւոր գէմքերից մէկի՝ Նոյն Տէմիրճի-պաշանի լրում, մոռացուած արգահատելի վիճակն է պատկերացնում, և շատ անպատուարեր է նկատում հայ համայնքի համար այն պարագան թէ Եգիպտի նման զբաղեւոր անձանօթ օտարուհիի ուր միայն գտած է իր յղմարէկ գլուխը հազեցնելու համար փոխանակ մտերիմ ու կարեկից ուրին

այն հասարակութեան, որուն շքնաղ դաւակն է ինքը, Նոյն:

Հայ ազգի «Ջրնաղ» դաւակնարին երեկ վիճակուած է գտնել «օտարուհիի ուր միայն իրենց յղմարէկ գլուխը հանգեցնելու համար»:

«Մօսկ»-ում (N 254) տպուած Նորայր Բիւլանդացու նամակից մենք իմանում ենք հետեւեալը.

«Իմ ժամանակիս հայերը երբէք հասկացած չեն թէ ինչպիսի ծառայութիւն կարող էի մատուցանել ազգային զբաղանդութեան: Բաղիսեցի շատ և շատ դուներ, աղաչեցի, պաղատեցայ ամենայն ինչ անօգուտ, և հոգեւոր ժամապաճառութիւն: Եթէ գտնուած ըլլային երկու երեք մտացի և բարեսիրտ մեծատուններ, որ զիս դատելով ի բաւարնութենէս, ի վաղիկիսէն-հայերէն բաւարմնէս, ի Քննասիրէ, ի Տեղեկութեան յԱռդիկ, ի *D. P. Crigence* տեսարակէ, յետոյ և այլ քննադատական յօդուածներէս, ի Պրիմ վարդապետէ, եթէ կ'ըսեմ, երկու երեք մտացի և բարեսիրտ մեծատուններ՝ զայդքանեաց և զայդպիսեաց երկասիրողն արժանաւոր համարէին քաջալերութեան և զբամական նպատակներու— 1882-ի ղեկեմբերէն մինչև ի սեպտեմբեր 1903-ի, քսան տարիէ աւելի, ես իբր կոճղ անպիտան ընկած չէի մնար ի ստանամանիս հիւսիսայ, այլ կ'ոգևորուէի հետզհետէ հրատարակելու զարդիւնս իմ քննութեանց և ուսումնասիրութեանց, բայց իմ ժամանակիս հայոց անզգայութիւնն ու անտարբերութիւնն ի ղեկեման յուրարկեաց զիմ սիրելի ամուսինս, իմ ժամանակիս հայոց անզգայութիւնն ու անտարբերութիւնն վաղուց սովամահ ստատկած էր և զիս, և եթէ տակաւին կ'ապրիմ՝ պաշտելի ամուսինս, երախտիքն է այն, որ 1879-էն իվեր կերակրած է զիս և կը կերակրէ...»

Պէտք է միանալ լինել «մեծատուններից» այդպիսի գիտակցութիւն սպասելով, երբ նիւթապէս տպահով մեր ինտելիգենցիան անգամ այդ գիտակցու-

Թիւը շունի Մի ելք է մնում այդ
զրույթի մէջ տալու համար.—հայ
զրույթի մէջ և զրաւանութեան մէջ

զործողներին թէ օգնելու և թէ օժան-
դակելու համար հիմնել արտասահմա-
նում մի ֆոնդ...

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ

Այս վերջին համարով լրանում է «Մուրճ»-ի նոր
շրջանի բառամեակը։ Մենք միջանի անգամ ասել ենք
որ ամսագիրս սննի որոշ միջնամալ բիւզժէ, որ դեռ չի
ծածկուում բաժանորդագրութեամբ։ Այնուամենայնիւ մենք
յամառութեամբ շարունակում ենք գործը դեֆիցիտով,
յոյս դնելով ապագայ աւելի աջող բաժանորդագրութեան
վրայ, որովհետեւ տարէցտարի, թէեւ դանդաղօրէն, բայց
աճում է բաժանորդների թիւը։ Նրանք, որոնք ծանօթ
են մեր ընդհանուր պայմաններին և դիտեն մեր ժողո-
վրդի մօրալ պահանջների ստոր մակերևոյթը՝ չեն զար-
մանալ, ըր միակ ամսագիրը ունի միայն 900 բաժանորդ
և ոչ մի բանի հազար։ Ոչ միայն գաւառն է դեռևս
անընթերցասէր, այլև օտարացած Թիֆլիսը, որի 60 հա-
զար հայ ազգաբնակիւթիւնը տալիս միմեայն 100 բա-
ժանորդ, այն էլ մեծ մասամբ գաւառացի... *)

Խմբագրութիւնս իր պարտքն է համարում շնորհա-
կալութիւն յայտնել երդուեալ հաւատարմատարների պ. պ.
Սամսոն Յարութիւնեանին և Յովհաննէս Սաղաթելեա-
նին, որոնց նախաձեռնութեամբ և ջանքերով բազուցի
միջանի պարոններ խմբագրութեան ուղարկել են բա-
ժանորդագիրն-նուէրներ՝ Այդ նուէրների դիմաց իբր
էկվիվալենտ (համարժէք) մենք ուղարկում ենք ամսա-

*) Թիֆլիսի մանր ծառայողների համար բաժանորդագիր
վճարումը դիւրացնելու նպատակով ընդունում ենք դրանցից բա-
ժանորդագիրը մաս-մաս նաև այսպէս. սկզբում 2 բուրլի և ապա
մնացած 8 բուրլին—ուրթ ամսուայ ընթացքում, ամիսը 1 բուրլի։